ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏ,
Փ/Ծ ՓՈԽԳՆԴԱՊԵՏ Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻՆ

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի (այսուհետ՝ ՄՓՎ ՃԿԿ) փորձագետ Հարություն Աշոտի Մխիթարյանի կողմից 12.08.2024թ.-12.08.2025թ. ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ**

Հարգելի՛ պարոն Դունամալյան.

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Լոռու ՄՓՎ ՃԿԿ փորձագետի կողմից իրականացվող աշխատանքային ծրագրի համաձայն՝ 12.08.2024թ.-12.08.2025թ. ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1) մասնակցել եմ Լոռու ՄՓՎ ՃԿԿ տեղեկատվական շտեմարանների արդիականացման աշխատանքներին.

2) մասնակցել եմ հաշվետախտակի համապատասխան ձևերի մշակմանը.

3) իրականացրել եմ արտակարգ իրավիճակների կանխմանն ու հետևանքների վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի մշակման աշխատանքներ.

4) աջակցել եմ ՃԿԿ-ի փաստաթղթաշրջանառության մշակման աշխատանքներին.

5) աջակցել եմ Լոռու մարզի դպրոցական ուսումնական հաստատություններում արտակարգ իրավիճակների առաջացման, կանխման և հետևանքների նվազեցմանն ուղղված ուսուցողական աշխատանքների կազմակերպմանը և նախապատրաստմանը.

6) մասնակցել եմ ՃԿԿ-ի օպերատիվ հերթապահ հերթափոխի աշխատանքներին.

7) մասնակցել եմ ազդարարման գործընթացներին.

8) իրականացրել եմ ռադիոկապի որակի ստուգում.

9) ՃԿԿ պետի հանձնարարությամբ իրականացրել եմ արտակարգ դեպքերի վերաբերյալ տեղեկատվության տվյալների հաշվառում «Excel» էլեկտրոնային աղյուսակով.

10) ՄՓՎ պետի և ՃԿԿ պետի հանձնարարությամբ կատարել եմ այլ հանձնարարականներ:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՓԾ Լոռու ՄՓՎ ՃԿԿ փորձագետ Հ. Մխիթարյան

«12» 08 2025թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ լավ.

ՀՀ ՆԳՆ ՓԾ Լոռու ՄՓՎ ՃԿԿ պետ,
փ/ծ փոխգնդապետ Ա. Դունամալյան

«12» 08 2025թ.